Azg
Azg
armenian daily

Սեպտեմբեր 16 Հինգշաբթի 1993

ՈՒՍՈՒՄՆԱՐ ԱՅՍՏԱՍԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիվ 178 (429)
գինը՝ 10 ռ.
դասիչ 69149
Երևան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Թուրքիա

Թեժ մարտեր Արարատի լանջերին

Վաշինգտոն, 15 սեպտեմբեր, ՍՆարտ. Անցած շաբաթվա վերջին թուրքական զորքերը Արևելյան Անատոլիայում սպանել են 55 քրդերի: Այս մասին է հայտնել Ռոյթեր գործակալությունը սեպտեմբերի 13-ին: Ըստ «Բոսբրն Գլոբ» թերթի հաղորդման, սպանվածների առնվազն 3-ը անզեն քաղաքացիներ են եղել: Թուրքիայի իշխանությունները տեղի ունեցածը մեկնաբանել են որպես PKK-ի ղարտիզանների դեմ հաջող գործողություն: Ականատեսների վկայությամբ կիրակի գիշերն Արարատի լանջերին ընթացող թեժ մարտերը ղարզորոնը երևում էին նույնիսկ Հայաստանի տարածից:

Գուցե սրանով են բացատրվում Մոսկվայի լանջերի խորհրդավոր առկայծումները, որ այնման անհանգստություն են պատճառում երևանցիներին, և որոնց բացատրությունը դժվարանում են մեկնել Հայաստանի պատասխանատուները: ■

Կարգախոսում

Ելցին-Ռաֆսանջանի հեռախոսազրույց

Երեկ առավոտյան իրանական կողմի նախաձեռնությամբ կայացավ Բորիս Ելցին-Ալի Աքբար Ռաֆսանջանի հեռախոսազրույցը: Ինչպես հայտնել են ՌԴ նախագահի մամլո ծառայությունից, կողմերը ցանկություն են հայտնել բազմակողմանի զարգացնելու ռուս-իրանական հարաբերությունները, քննարկելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող, մասնավորապես՝ Կասպից ծովի հարցերը: Հեռախոսազրույցում մեծ տեղ են գրավել Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցերը: Ընդգծվել է գինվածհակամարտության ավարտվելուն նպաստելու, Ղարաբաղյան խնդրի կայուն քաղաքական լուծում գտնելու Ռուսաստանի եւ Իրանի ձգտումը: Ելցինը տեղեկացրել է նաեւ տաջիկ-աֆղանական սահմանի ամրապնդման եւ Տաջիկստանում իրավիճակի կայունացմանը նպաստելու Ռուսաստանի ձգտման մասին:

Իրանը գնահատում է Վելայաթիի այցը. Իրանի արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Վելայաթիի Հայաստանի կատարած այցելությունից հետո Հայաստանում Իրանի ԱԳՆ հատուկ ղեսպիռակը BBC-ին տված իր հարցազրույցում հայտնել է, որ «Երեւանի հայերը զգում են, որ չեն կարողանում վերահսկել իրավիճակը եւ ադրբեջանական տարածքի գրավման պատճառով նրանք հայտնվել են մեծ ճնշման տակ: Իրենց հերթին նրանք էլ զգալի ճնշում են գործադրում Ղարաբաղի վրա, որպեսզի վերջինս նստի բանակցությունների սեղանի մոտ»: Անդրադառնալով հակամարտ կողմերի բանակցություններում Իրանի դերին, պատվիրակը նշել է, թե «Իրանը մշտապես ջանքերի մեջ է Բաքվի ղեկավարության հետ: Մենք պետք է շարունակենք խնդրի լուծման մեր ջանքերը: Կովկասի իրավիճակը եւ Ղարաբաղի հարցը պարզ խնդիրներ չեն, նրանց մեջ բազմաթիվ գործոններ են ներառված: Իհարկե, այժմ խնդրի լուծման համար որոշ քայլեր արվել են, բայց անհավանական կլինի սպասել հարցի շատ արագ լուծմանը»:

Ուկրաինան ժխտում է զենք վաճառելը

Ուկրաինայի բարձրաստիճան պաշտոնյաները հերքել են Ադրբեջանին զենք վաճառելու հայկական կողմի մեղադրանքները, նշելով, որ իրենք միայն վերանորոգում են վնասված տանկերը: Ուկրաինայի անվտանգության ծառայության խոսնակ Վիկտոր Վարենիկը հայտնել է, որ Ուկրաինայում ծանր տանկերի վերանորոգման վերաբերյալ միջկառավարական համաձայնություն կա Ադրբեջանի հետ: Ուկրաինան ունի ծանր տանկերի վերանորոգման գործարանների ցանց: Անցած շաբաթ ուկրաինական «Նեզավիսիմոս» օրաթերթը հայտնել է, որ «Ռուսլան» Ան-124 բեռնատար ինքնաթիռներով արդեն կատարվել է ծրագրված 19 թռիչքներից առաջինը: Այս ինքնաթիռը կարող է տեղափոխել 3 տանկ: Շնչած Ուկրաինան պաշտոնապես չեզոք դիրք է գրավում դարաբաղյան հակամարտությունում, կիեւը դիտարկում է Ադրբեջանին որպես մարտավարական գործընկեր եւ նավթի պոտենցիալ մատակարար: Այս տարվա սկզբին Ուկրաինան, Իրանը եւ Ադրբեջանը իրանական գազը Ադրբեջանով Ուկրաինա հասցնելու համար մի ընկերություն են հիմնել, չնայած դեռեւս այն չի գործում: Ռոյթեր

Մոսկվա

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՀԱՆԴԻՊԵԼ ԱԼԻԵՎԻՆ

Մոսկվայում ստորագրվեց դրամական համակարգերի միավորման համաձայնագիր

Երեկ Մոսկվայում ստորագրվեց Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության դրամական համակարգերի միավորման մասին համաձայնագիր: Հայկական կողմից համաձայնագիրը ստորագրեցին Վիգեն Չիթեչյանը Եւ Հայաստանի պետական բանկի նախագահ Իսահակ Իսահակյանը, ռուսական կողմից՝ փոխվարչապետ Ալեքսանդր Շոխինը եւ Ռուսաստանի Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վյաչեսլավ Սոլովյովը:

Նույն օրը կարճատեւ աշխատանքային այցով Մոսկվայում գտնվող ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը 45 ռոպեանոց առանձնազրույց ունեցավ Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի հետ: ՀՀ նախագահի մամուլի ծառայության հաղորդմամբ, հանդիպման ընթացքում քննարկվել է մասնավորապես ռուբլու գոտում երկու երկրների համագործակցության խնդիրը: Շոշափվել է նաեւ ծմռան նախապատրաստական աշխատանքների հարցը: Երկու երկրների նախագահները քննարկել են նաեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրները եւ շրջանում ստեղծված իրադրությունը: Հանդիպումից հետո, պատասխանելով լրագրողների հարցերին, Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրում հաջողություն կլինի միայն Բաքու-Ստեփանակերտ անմիջական բանակցությունների ժամանակ: Այդ առթիվ նա բերեց կոնկրետ օրինակներ՝ Սմիռնով-Սենգուր, Արծինբա-Շեւարդնաձե, Ռաբին-Արաֆատ: Տեր-Պետրոսյանը նաեւ նշեց, թե Ղարաբաղի խնդրի լուծման հարցում գլխավորը Ռուսաստանի եւ միջազգային հանրության ջանքերի համախմբումն է: Հայաստանի նախագահի կարծիքով, երկկողմ բանակցությունների սկզբունքը պետք է կիրառվի նաեւ Ղարաբաղի խնդրի հարցում: «Եւ եթե շահագրգիռ կողմերը գիտակցում են այդ փաստը, ապա կարելի է ասել, որ մենք գտել ենք հակամարտության լուծման բանալին», ասաց Լ. Տեր-Պետրոսյանը: Իր կողմից նա վստահեցրեց, որ ինքը միշտ պատրաստ է հանդիպել Հեյդար Ալիեւին եւ լրագրողներին հիշեցրեց, որ դեռ այն ժամանակ, երբ Ալիեւը Նախիջեւանի Գերագույն խորհրդի նախագահ էր, Հայաստանի ղեկավարության հետ կապ էր պահպանում: «Բոլորին հայտնի է, որ դրա շնորհիվ հայ-նախիջեւանյան սահմանում հարաբերական անդորր էր», ասաց նախագահը եւ շեշտեց, թե ինքը պատրաստ է հանդիպման, միայն թե, եթե խոսքը գնում է Ղարաբաղի հարցի կարգավորմանը, ապա անհրաժեշտ է Բաքվի եւ Ստեփանակերտի անմիջական շփում: Ու թեեւ, ինչպես տեղեկացնում է Սնարը, երկու նախագահների հանդիպման ընթացքում չի քննարկվել Ադրբեջանի ԱՊՀ մտնելու հարցը, սակայն Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտնել է, թե խնդիր շոշափել են այդ հարցը եւ եկել այն եզրակացության, որ Ռուսաստանն ու Հայաստանը կողջունեն Ադրբեջանի նման ցանկությունը: Անդրադառնալով Ռուսաստանից Հայաստան ուղարկվող բեռների խնդրին, Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտնեց, թե իրավիճակը բարդացել է Վրաստանի վերջին իրադարձություններից հետո:

«Մենք այդ կապակցությամբ ինչպես որոշումներ ենք մտածել եւ հուսով եմ, որ ամեն ինչ լավ կլինի», հայտարարեց ՀՀ նախագահը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը Մոսկվայում հանդիպեց նաեւ Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի հետ:

«Ազգ»

Մ. Արեւելք

ՌԱԲԻՆԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՍԻՐԻԱՅԻՆ

Արաֆաթը հաղթական վերադառնում Թունիս

Մարոկկոյից վերադառնալով Երուսաղեմ, վարչապետ Յ. Ռաբինը երեկ մեղադրեց Սիրիային՝ Իսրայել-ՊԱԿ համաձայնության դեմ ներպաղեստինյան ընդդիմությանը հովանավորելու համար: Պաղեստինյան ընդդիմադիր կազմակերպությունների կենտրոնատեղիները, ասաց Ռաբինը, գտնվում են Սիրիայում, եւ վերջինս թույլ չի տալիս, որ լիբանանյան բանակը Հարավային Լիբանանում անհրաժեշտ միջոցներով արգելի Հզբոլլահի հարձակումները Իսրայելի դեմ:

Ինչ վերաբերում է Ռաբաթում Հասան 2-ի թաղավորի հետ նախորդ օրն ունեցած հանդիպման արդյունքներին, Ռաբինին ընկերակցող իսրայելցի պաշտոնատարներից մեկի կարծիքով, այն չի համապատասխանել ակնկալություններին, այլ խոսքով՝ Իսրայել-Մարոկկո դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվել:

Երեկ, Վաշինգտոնում համաձայնագիրը կնքելուց եւ Սենատի անդամների հետ հանդիպում ունենալուց հետո, որի ընթացքում Գազայի ու Երիքովի կառուցապատման համար ֆինանսական օգնություն եւ վարկեր էր խնդրել, Յասիր Արաֆաթը հաղթական վերադարձավ Թունիս, որտեղ Կարթագենի օդանավակայանում նրան վերադարձել էր պետական դեկավարի ընդունելություն:

Մյուս կողմից, երեկ դիվանագիտական աշխուժություն ցույց տվեցին Իսրայել-ՊԱԿ համաձայնության ընդդիմադիր պաղեստինցիները: ՊԱԿ-ի գործկոմի անդամներից Ֆարուկ Քադդումին այց կատարեց Բաղդադ, իսկ համաձայնությանը դեմ էվեարկածներից Ջորջ Հաբաշն ու Նայֆ Հաուաթմեն Տրիպոլիում հանդիպում ունեցան Լիբիայի ղեկավար Քադդաֆիի հետ, ընդդիմությունը միավորելու եւ կազմակերպելու առաջադրանքով:

Արաբական գրավյալ հողերում երեկ նույնպես բախումներ տեղի ունեցան պաղեստինցիների եւ իսրայելցի բանակայինների միջեւ: Սպանվեց 1 պաղեստինցի եւ վիրավորվեց 4 իսրայելցի զինվոր: Զուգահեռաբար, ոստիկանությունը պաղեստինցիներին արգելեց մինչեւ առաջիկա կիրակի դուրս գալ Գազայից, վախենալով հրեաների նոր տարվա տոների առիթով իսրայելցիների հետ նրանց հավանական բախումներից: «Ազգ»

Մինչ Վրաստանում երեկ երկամսյա արտակարգ դրություն հայտարարվեց, Գամսախուրդիայի զինյալները Կոբուլիայի հրամանատարությամբ յոթերեքթի լույս գիշերը Արեւմտյան Վրաստանում հարձակվեցին «Մխեդրիոնի» զինված խմբավորման եւ ոստիկանության համատեղ ռազմակետի վրա: Մարտի ընթացքում զոհվեցին «Մխեդրիոնի» 3 մարտիկ: Նույն գիշերը զվիադականները փորձել են գրավել Սամտրեդիա քաղաքը, սակայն անհաջող: Ներկայումս մարտեր են գնում կառավարական ուժերի եւ Կոբուլիայի միավորումների միջեւ Լանչխութի շրջանում: Զվիադականները վերահսկում են Սամտրեդիա-Լանչխութի ճանապարհը: Կառավարական զորքերը տվել են յոթ սպանված եւ 70 վիրավոր: Փոքի նավահանգիստը շրջափակվել է զվիադականների կողմից: ■

Հայաստան

Հրեատկոծվել են Նոյեմբերյանի եւ Իջեւանի շրջանները

Սեպտեմբերի 14-ի երեկոյան իրադրությունը կրկին սրվել է Հայաստանի հյուսիսարեւելյան սահմանամերձ շրջաններում:

Հայաստանի պաշտպանության նախարարության տվյալներով, ադրբեջանական կազմավորումները զենքի տարբեր տեսակներից, այդ թվում Գրադ կայանքներից հրետակոծել են Նոյեմբերյանի շրջանի Շավարշավան գյուղի դիրքերը: Հրետակոծությունը շարունակվել է մինչեւ երեկ առավոտ: Սեպտեմբերի լույս 15-ի գիշերը տանկերից գնդակոծվել են Իջեւանի շրջանի Վազաշեն գյուղի դիրքերը: Հայկական ուժերը ստիպված են եղել դիմել պատասխան գործողությունների: Երեկ առավոտյան Ադրբեջանի Թռուզի շրջանի տարածից գնդակոծվել են Տաուշի շրջանի սահմանային դիրքերը: Այստեղ նույնպես հայկական ուժերը դիմել են պատասխան գործողությունների: Երեկ կեսօրի դրությամբ փոխհրաձգությունը շարունակվում էր:

Ստեփանակերտի մեր թղթակիցը հաղորդում է, թե սեպտեմբերի 14-ի երեկոյան Աղդամի շրջանի արեւելքում տեղաբաշխված տանկերից եւ ծանր հրետանուց գնդակոծվել եւ հրետակոծվել են Մաքսարայ գյուղի հայկական պաշտպանական դիրքերը: Նախնական տվյալներով, հայկական կողմից տուժածներ չկան: ԼՂՀ կազմավորումները ձեռնպահ են մնացել պատասխան գործողություններից: «Ազգ»

Լեհաստան

Սոմալիում հրթիռակոծվեց ՄԱԿ-ի կենտրոնը

Երեկ նոր բախումներ պատահեցին Սոմալիի մայրաքաղաք Մոգադիշոյում, որտեղ փախուստի մեջ գտնվող գեներալ Այդիդի մարդիկ հրթիռակոծեցին ՄԱԿ-ի կենտրոնատեղին, վիրավորելով շենքում գտնվող 8 մարդու: Մայրաքաղաքի այլ մասերում բախումների ընթացքում սպանվեցին ՄԱԿ-ի խաղաղապահ նիգերիացի 7 զինվորներ, ինչպես նաեւ չճշտված թվով սոմալցիներ, քաղաքի մի այլ մասում ՄԱԿ-ի պակիստանցի զինվորները քարկոծության ենթարկվեցին քաղաքացիների կողմից: Սոմալիում տիրող կացության մասին երեկ աղմիրալ Ջոնաթան Հաուը Նյու-Յորքում զեկուցեց գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին:

Օտարերկրացիների սպանությունը շարունակվում է

Ֆլորիդայի նահանգապետ Չայլզը նախագահ Քլինթոնից ֆինանսական օգնություն է խնդրել զբոսաշրջիկների դեմ վերջերս թափ առած սպանությունների ալիքը կանգնեցնելու համար: Երեքշաբթի օրը Թալահասի մոտ կատարված սպանությունը այս շաբաթվա մեջ երկրորդն է, եւ իններորդը՝ այս ամիս: Նահանգի զբոսաշրջիկության պաշտպանությունը 30 օրով դադարեցրել են գովազդումը արտասահմանում:

Իրանը հերքում է իրաքյան նավթին առնչվող հաղորդումը

Սեպտեմբերի 15-ին Իրանը հերքեց «Աշ շարք ալ աուսաթ» թերթի այն հաղորդումը, թե իրաքյան նավթը իբր Իրանի տարածքով տեղափոխվում է ուրիշ երկրներ: Ինչպես ասվում է Թեհրանում տարածված նավթի նախարարության հայտարարության մեջ, այդ հաղորդումը միտված է բացառապես Իրանի քաղաքական վարկի խարխլմանը»: «Իսլամական հանրապետությունը լիովին կատարում է այն բոլոր բանաձեւերը, որոնք վերաբերում են Իրաքի դեմ տնտեսական պատժամիջոցների կիրառմանը», ընդգծվում է փաստաթղթում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՍԱՌ ՏԱՍՍ

Շուտով կսկսվի ահաբեկիչների դատավարությունը

Նյու Յորքի Համաշխարհային առեւտրի կենտրոնում ռմբահարության դեպքի քննության համար սկսվել է երդվյալների ընտրությունը: Հետեւյալ դատարանի ներկայացուցիչների կարծիքով, գործի քննությունը կարող է տեւել 12-16 շաբաթ: Չորս ամբաստանյալները մեղադրվում են փետրվարի 26-ին կատարված ահաբեկչության մեջ, որի հետեւանքով զոհվել էր 6 եւ վիրավորվել մոտ 1000 մարդ:

Ցույցեր Փարիզում

Ֆրանսիայի մայրաքաղաքի 20 տարբեր մասերում, հատկապես կենսական խաչմերուկների եւ մայրուղիների վրա, պետական հատկացումներից զրկվելու համաեվրոպական որոշումից դժգոհ ֆերմերներն անցագրելներ տեղադրելով կազմալուծեցին երթեւեկը: Ոստիկանությունը որտեղ կարող էր արգելեց ֆերմերների ցույցերը: ■

digitised by A.R.A.R.@

Երեւան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ ՀՍՏԱԿ Է՝ 3.1-4.5

Ուսուցիչների գործադուլը կարծես թե սպառեց իրեն՝ հասնելով հնարավոր առավելագույն հաջողություններին: Համենայն դեպս նման կարծիք հայտնեց հանրապետության լուսավորության նախարար Հայկ Ղազարյանը երեկ կայացած կոլեգիայի ընդլայնված նիստում՝ հայտարարելով, որ թեեւ իր կարծիքով գործադուլավորների պահանջները տեղին եւ իրավացի էին, այնուամենայնիվ պայքարի ծեւը ճիշտ չէր ընտրված:

Գործադուլը, որը սկսվել էր սեպտեմբերի մեկին եւ օրեցօր ավելի ու ավելի մեծ թափ հավաքել՝ ընդգրկելով մինչեւ 45 դպրոց, իր բարձրակետին հասավ սեպտեմբերի 10-ին, որից հետո ալիքը թուլացավ, եւ նախարարի խոսքերով այսօր լրիվ կամ մասնակի գործադուլի մեջ է ընդամենը 15 դպրոց (խոսքը միայն Երեւանի մասին է): Ինչպես հայտնի է, ուսուցիչների հիմնական պահանջը աշխատավարձի բարձրացումն էր, եւ նույնիսկ նախարարը խոստովանեց, որ մեկ դպրոցի դիմաց ներկայումս վճարվող գումարը խիստ ցիչ է եւ չի կարող բավարարել ուսուցիչների նույնիսկ տարրական պահանջմունքները: Եւ այնուամենայնիվ, ըստ նրա, երբեմն ուսուցիչների պահանջը ծայրահեղ եւ անընդունելի չափերի էր հասնում՝ բարձրացնել աշխատավարձը 10 անգամ եւ այլն:

Բանից պարզվում է, որ ուսուցիչներ սոցիալական պայմանների բարելավմանն ուղղված աշխատանքներն սկսվել են դեռեւս երկու տարի առաջ, եւ արդեն 1992 թ. որոշվել է, որ ուսուցիչների աշխատավարձը 1994 թ. հոկտեմբերից պետք է մտցնել սանդղակի մեջ (ըստ որի որոշվում է, թե տվյալ ատյարեզի աշխատողների աշխատավարձը քանի անգամ պետք է գերազանցի հանրապետությունում հաստատված նվազագույն աշխատավարձի չափը): Հետագայում, երկարատեւ բանավեճերից հետո այդ ժամկետն առաջ է բերվել մինչեւ 1994 թ. հունվարի 1-ը: Այլ կերպ ասած, 1994 թ. հունվարից ուսուցիչների համար հաստատված է 3.1-4.5 գործակիցը (մեկ դրույքի դիմաց ուսուցիչները կստանան 3.1-4.5 անգամ ավելի, քան նվազագույն աշխատավարձն է): Ընդ որում, սրա մեջ չեն մտնում լրացուցիչ վարձատրումները դասղեկության, տետրեր ստուգելու եւ այլն: Բնականաբար 3.1-ն այն ուսուցիչների գործակիցն է, ովքեր չունեն բարձրագույն կրթություն, աշխատանքային մեծ ստաժ եւ այլն: Իսկ 4.1-4.5 գործակից ուսուցիչները կարող են ստանալ միայն ատեստավորման հիման վրա: Պրն. Ղազարյանի խոսքերով, ուսուցիչների գործակիցը սանդղակում ավելի բարձրացնելն անհնար է, որովհետեւ դրանից բարձր ստանում է բուհերի պրոֆեսորադասախոսական կազմը: (Այս առթիվ նախարարն այն կարծիքը հայտնեց, թե դրանից ավելի պահանջողները փորձում են իրենց երջանկությունը կառուցել ուրիշի դժբախտության վրա՝ ակնկալելով, թե այդ դեպքում ուսուցիչները պրոֆեսորներից ավելի կստանան):

Եւ քանի որ կոլեգիայի ընդլայնված նիստում իշխում էր այն մթնոլորտը, թե պետք է անդայման վերաբերմունք արտահայտել գործադուլը շարունակող դպրոցների տնօրենների եւ համադասական շրջանների ժողկրթբաժինների վերաբերյալ, ելույթների ընթացքում կարծիքներ հնչեցին, թե այդ դպրոցների տնօրենները հիմնականում իրենց տեղում չեն, իսկ մի շարք դպրոցներում գործադուլների «շարժիչ ուժը» ցածր որակավորում ունեցող ուսուցիչներն են: Ինչ վերաբերում է գործադուլների օրինականությանը, ապա հատուկ այդ հարցը պարզաբանելու նպատակով արդարադատության նախարարությունից հրավիրված մասնագետի խրթին ելույթից պարզվեց միայն, որ արդարադատության նախարարությունն իրավասու չէ մեկնաբանել այդ հարցը:

Մի խոսքով, գործակիցները որոշված են, եւ ամենայն հավանականությամբ ուսուցիչների գործադուլը կդադարեցվի: Այսուհետեւ նրանց աշխատավարձի չափը կախված կլինի միայն հանրապետության նվազագույն աշխատավարձի չափից: Ներկայումս այն 4200 ռուբլի է (թեեւ ամենայն հավանականությամբ հոկտեմբերի 1-ից նոր ինդեքսավորումներ կլինեն), ուստի եթե նույնիսկ ոչինչ չփոխվի, ապա եկող տարի ուսուցիչները 1 դրույքի դիմաց կստանան առնվազն 13020 ռուբլի միջին հաշվով ինդեքսավորումը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ

Բնական պաշարների նոր վարձաչափեր

ՀՀ օրենսդրության հիմունքներին համապատասխան կառավարությունը որոշել է նոր վարձաչափեր սահմանել բնական պաշարների օգտագործման եւ շրջակա միջավայրի աղտոտման համար: Ժամանակավոր կարգով սահմանվում են արդյունաբերության մեջ ջրի օգտագործման, օգտակար հանածոների, հանքային շինանյութերի եւ ջրերի արդյունահանման, անշարժ աղբյուրներից եւ ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետումների, հոսքաջրերի բացթողման, թափոնների տեղադրման, ինչպես նաեւ երկրաբանահետախուզական աշխատանքների համար ծախսված գումարների մարման վարձաչափի հաշվարկումը եւ վճարումները:

Վարձը վճարում են հանրապետության տարածքում գործող բոլոր ձեռնարկությունները (անկախ սեփականության ձեւից) եւ քաղաքացիները:

Որոշումը ուժի մեջ է 1993 թվականի սեպտեմբերի 1-ից: ՀՀԿՄԾ

Համաշխարհային բանկի տվյալների համաձայն Հայաստանում մեկ շնչին ընկնող տարեկան եկամուտը 1991 թ. 2150 ամերիկյան դոլարից 1992 թ. իջել է 780-ի: Տաջիկստանում այդ ցուցանիշը նվազել է ավելի քան կիսով չափ, 1050-ից իջնելով 480-ի: ՄԴՀ-ում եկամուտների ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Բելառուսում, բայց այստեղ եւս նկատվում է եկամուտների անկում տարեկան 3110-ից 2920-ի: 1992 թ. նախկին ԽՍՀՄ երկրներից ոչ մեկում բնակչության մեկ շնչին ընկնող տարեկան եկամուտը չի հասել 3000 դոլարի նշագծին: ՆՏ

Քարոզ

Փորձում են կարգ ու կանոն հաստատել ավիափոխադրումներում

Օդանավերի եւ ուղեւորների անվտանգության ապահովման բնագավառում Ադրբեջանի ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունների, ինչպես նաեւ մասնային կոմիտեի ծառայությունների գործողությունների համակարգման հարցերին էր նվիրված այդ գերատեսչությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը: Ինչպես սեպտեմբերի 13-ին Պոստֆակտում գործակալության թղթակցին հայտնեցին Ադրբեջանի գլխավոր ոստիկական գերատեսչությունում, խորհրդակցությունում քննարկվել են հետեւյալ հարցերը: Աղջերիի միջազգային հնարավոր քայլերից օդային նավատորմի պաշտպանության ազգային ծրագրի նախագիծը, ռազմավարական նյութերի դուրս բերման արգելքի մասին Ադրբեջանի նախագահի հրամանագրի կատարման ուղիները, օդանավակայանում գործող ազգային անվտանգության եւ ՆԳՆ ծառայությունների կողմից ուղեւորների սպասարկման կուլտուրայի բարձրացման խնդիրները: Խորհրդակցությունում ամփոփվել են ավիահասմների վերավաճառի դեմ մղվող պայքարի արդյունքները: Ստուգումը ցույց է տվել, որ օգոստոսի 19-ից «Ադրբեջանի օդային գծեր» կոնցեռնի գծով վերադարձվել է ակնհայտորեն վերավաճառի համար նախատեսված 11 հազար տոմս, դրանք բոլորը հանձնվել են «Սիրենա» համակարգին: Իսկ օդանավակայանում, որտեղից ամեն օր թռչում է 2200 ուղեւոր, մեկ օրում վերադարձվել է 365 տոմս: ՆՏ

Ադրբեջանում վճռել են թուրքական վարկի կիրառման ձեւը

Ինչպես Պոստֆակտում գործակալության թղթակցին հայտնեցին սեպտեմբերի 14-ին Ադրբեջանի էկոնոմիկայի նախարարության օտարերկրյա ներդրումների վարչությունում, երկրի կառավարությունն արդեն վճռել է Թուրքիայի հատկացրած 250 միլիոն դոլլարանոց վարկի օգտագործման ձեւը. 20 միլիոնը կհատկացվի դեղորայքի ձեռքբերմանը, 50 միլիոնը՝ հացահատիկի, 20 միլիոնը՝ պարենի (միս, կաթ, կարագ) գնմանը, 80 միլիոնը՝ շինարարության կարիքներին: Ինչ վերաբերում է մնացյալ 80 միլիոնին, դրանց ճակատագիրը դեռ անհայտ է: Սակայն այդ գումարը կարող է օգտագործվել հայկական զինված ուժերի հարձակողական գործողությունների հետեւանքով մշակական բնակության վայրերը հարկադրաբար լքած փախստականների խնդիրների լուծման համար: Մոտ ժամանակներս Թուրքիայի խոստացած վարկի շրջանակներում Ադրբեջան կառավարն ժողովրդական ապրանքներ: ՆՏ

Ձերբակալվել է հակամախսանենգային պայքարի բաժնի պետը

Ձերբակալվել է Ադրբեջանի մասնային կոմիտեի հակամախսանենգային պայքարի բաժնի պետ Ռուսլան Հուսեյնկուլիեւը: Քննությունը վարում է հանրապետության դատախազությունը: Այդ մասին հաղորդում են ադրբեջանական աղբյուրները: Թուրան գործակալության տվյալների համաձայն, ձերբակալության պահին Հուսեյնկուլիեւի աշխատասենյակից հանվել է 2 մլն ռուբլի: Մասնային կոմիտեի մամուլի կենտրոնում հայտնեցին, որ այդ գործը բնավ կապված չէ Հուսեյնկուլիեւի հիմնարկի գործունեության հետ եւ այն ենթադրություն արեցին, թե նրա ձերբակալությունը սխալմամբ է եղել: Սնարք

Նվեր Ադրբեջանի ժողովրդին

Եվրոպայի թյուրք եւ իսլամական մշակույթի կենտրոնը, որը գտնվում է Գերմանիայում, պատրաստել է Բաքվում կրոնական, գիտամշակութային կենտրոնի շենքի կառուցման նախագիծ: Ինչպես Պոստֆակտում գործակալության թղթակցին հայտնեցին սեպտեմբերի 14-ին գերմանական կազմակերպության Բաքվի բաժանմունքում, Գերմանիայում հանգանակված միջոցներով ենթադրվում է շենքը հանդերձավորել սարքավորումներով: ՆՏ

Դարիզ

Հայ գիտնականների համաժողովն ավարտվեց

Դոկտոր Հակոբ Կրկյաշարյանի նախագահած «Արարատ» գիտությունների մի ջազգային ակադեմիայի նախաձեռնությամբ կազմակերպված Հայ գիտնականների միջազգային 2-րդ գիտաժողովում Հայաստանից, Ամերիկայից, Ավստրալիայից, Կանադայից, Գերմանիայից, Իրանից եւ Լիբանանից հրավիրյալ մոտ 70 գիտնականները, միանալով Ֆրանսիայի իրենց հայրենակից գործընկերների հետ, 4 օր խորհրդակցում եւ բանավիճում էին հայությանը հուզող գիտական հարցերի շուրջը: Միաժամանակ Փարիզում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական շենքի շքեղ դահլիճում Հայաստանից հրավիրված «հրաշամանուկները» փարիզահայությանը հիշեցնում էին, թե «հայությամբ կարելի է նաեւ պարծենալ երբեմն»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքում սեպտեմբերի 6-9-ը հայ գիտնականների համաժողովի անցկացման մասին դոկտոր Հակոբ Կրկյաշարյանից էիք լսել դեռ երեք ամիս առաջ: Ֆրանսահայ իրականության մեջ տասնյակ անվանի ընկերակցություններ կան, որոնցից մեկն է «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիան: Դոկտոր Հակոբ Կրկյաշարյանի յուրօրինակ երազանքն էր մի օր Փարիզում աշխարհի չորս կողմերից հավաքել տարբեր մասնագիտություններ տեր հայ գիտնականներին եւ հայ ժողովրդին հուզող գիտական հարցերի քննարկման առիթ ընծայել: Նա լավ գաղափարներ ուներ, հանուն դրանց ոչինչ չէր խնայում, սակայն, մեկ ձեռքը ծափ չի տալիս եւ «գիտական համագումար, բժշկական ժողով, բատրոնի փառատոն եւ այլն կազմակերպելու համար գիտական, բժիշկ կամ դերասան լինելը բնավ պայման չէ, քանի որ նման միջոցառումներ կազմակերպելը իմքնին մի արհեստ է եւ ինչպես ուրիշ տասնյակ հազարավոր արհեստներ, պետք է բողնել արհեստավորներին»:

Սեպտեմբերի 6-ին ժամը 19-ին Փարիզի երկրորդ հայաբաս արվարձան Իսի լե Մուլինոյի ցուցահանդեսների պալատում խաղաղաշունչ երեսփոխան պրն. Անդրե Սանտինիի ի պատիվ հայերի տված «կոկտեյլով» պաշտոնապես բացվեց համաժողովը, որի գործնական մասն սկսվեց հաջորդ առավոտյան:

Երբ դահլիճում ՀՀ արտգործնախարարի առաջին տեղակալ Արման Կիրակոսյանն ընթերցում էր ՀՀ նախագահի ողջույնի ուղերձը, դահլիճում ներկա էին միայն «Յառաջ»-ի եւ «Ազգ»-ի ներկայացուցիչները: Օտար մամուլից որեւէ լրագրող չկար:

Ներածական բաժնում ելույթ ունեցան նաեւ դոկտոր Հակոբ Կրկյաշարյանը (գիտաժողովի նախագահ), Ադնան Բադրանը (ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի տեղակալ), Ժերալդ Գելտոնը (Փարիզի քաղաքապետի խորհրդական), Ֆաբրեզ Սարգսյանը (Հայաստանի ԳԱ նախագահ), Վահան Գրիգորը (Ամերիկահայ ճարտարագետների եւ գիտնականների միության նախագահ) եւ ուրիշներ:

Սեպտեմբերի 7-ի երեկոյան ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեծ հանդիսասրահում կազմակերպվեց գեղարվեստական երեկույթ: Հայաստանում վերջերս գործունեություն ծավալող «Հայ մշավորական կին» միջազգային գիտամշակութային, կենտրոնը, որը մինչեւ օրս համերգներ, ցուցահանդեսներ, գիտաժողովներ է կազմակերպել ի նպաստ ազգի հոգեւոր վերելքի, այս անգամ դահլիճին ներկայացրեց Հայաստանի մի քանի շնորհալի երաժիշտ երեխաների կատարումները:

Անուշը հայտնել չուզող փարիզահայության կարկառուն դեմքերից մեկը իմ ականջին փսփսում էր. «Եղբայր, եթե գրես, սաղրիշի տեղ կանցնես, եթե չգրես (չեմ ասում, թե գրելու դեպքում շատ բան կփոխես) պարտականության մեջ թերացած կլինես: Այս դահլիճին նայեցեք, հազիվ մոտ երեք տասնյակ ֆրանսահայեր են ներկա ընդամենը 500 տեղանոց սրահում: Ու՞ր են պարահանդեսներում, սեղանների շուրջը «հայրենասիրության» քարոզություն անող ֆրանսահայերը»:

Բարեկամս իրավունք ուներ: Գեղարվեստական երեկույթին «մի կերպ» եկած ֆրանսահայերն էլ մեզ էին մոտենում եւ խրենց հիացմունքն արտահայտում: Մեկը նույնիսկ ասաց. «Երբ այս երեխաների ձայնադիսկները, լազերային դիսկեսները եւ տեսաերիզները ունենայինք մեր ձեռքի տակ, հավատացեք, մեր երեխաները կդադարեին ամաչել հայ լինելու համար եւ, ընդհակառակը, կհպարտանային»:

Երեկոյան եղան նաեւ «հեսարիր» երեւույթներ: Նախկին հայաստանցի, այժմ ամերիկահայ դերասանուհի տիկ. Մարի-Ռոզ Աբուսեֆյանը Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատնից» հատվածներ արտասանելիս իր sexy հագուստի մեջ այնպիսի օձագալարաշարժումներ էր անում, որ հանդիսականներն սկսեցին ավելի շատ հեսարրրվել այն բանով, թե նրա հագուստը երբ է վերջնականապես վայր ընկնելու:

Կազմակերպիչների «խնամիական» չափանիշների հետեւանքով «հոյակապ երեկո մը վերջ գտավ անճաշակությունով», եւ լավ է, որ օտար մամուլից որեւէ մեկը ներկա չէր:

Հետեւյալ օրը շարունակվեցին գիտական զեկուցումները եւ հայաստանցի արվեստագետների ցուցահանդեսները, որոնք զերծ չէին մի շարք թերություններից:

Թող նեղացող չլինի, սակայն վատ չէր լինի իմանալ, որ Հայաստանի պատվիրակության անդամ գիտնականներն ինչպիսի պայմաններում անցկացրին փարիզյան մեկ շաբաթը: «Հայաստանցի են, առանց զուգարանի, առանց լոգարանի, առանց հեռախոսի վարժված են, ասամնին կսեղմեն ու կադրին» մտայնությունը, ինչպես ուրիշ ծամծմված հասկացություններ, պետք է հիմնովին փոխվեն: Գործը, ձեռնարկումն իմքնին շատ մեծ էր, սակայն իր եւ մեր ազգի մեծությունը վայել պետք է աշխատենք, ոչ թե սիրողական մակարդակով:

ՐԱՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍ
Մեր սեփ. թղթակից, Փարիզ

digitised by A.R.A.R.@

Դիտարան

Ստեղծվել են սոցիալական ծառայություններ

Հայաստանի Հանրապետությունում սոցիալապես առավել անապահով ընտանիքների վիճակը բարելավելու նպատակով ՀՀ կառավարության 1993 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 458 որոշմամբ հանրապետության շրջաններում եւ քաղաքներում ստեղծվել են սոցիալական ծառայություններ:

Որոշմամբ հաստատված է սոցիալական ծառայության օրինակելի կանոնադրությունը:

Սոցիալական ծառայությունը կոչված է աջակցելու միայնակ, անօգնական ծերերին ու հաշմանդամներին, անչափահաս երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքներին, ծնողազուրկ եւ հաշմանդամ երեխաներին, միայն կենսաթոշակառուներից կազմված ընտանիքներին, ինչպես նաեւ սոցիալապես առավել անապահով ընտանիքներին եւ ուղղված է նրանց հիմնական կենսական պահանջմունքների բավարարմանը, կենսագործունեության համար համապատասխան պայմանների ստեղծմանը, սոցիալական հարմարվողականության եւ ակտիվ երկարակեցության պահպանմանը: «Ազգ»

Ոչ թե 500, այլ 4500

Մեր թերթի երեկվա համարի երկրորդ էջում տպագրել էինք Նոյան տարեսկզբի գործակալության հաղորդած մի տեղեկություն, որ ասվում էր, թե «Արտարտեսակնացման ծրագրով 1993-94 թթ. նախատեսվում է խնայել կանաչոտրել մոտ 500 ձեռնարկություն»: Նույն օրն իսկ խմբագրություն զանգահարեց արտարտեսակնացման պետական հանձնաժողովի անդամ որն, Բագրատ Անդրեասյանը, հայտնելով, թե ինքը ոչ թե սեփականաշնորհման ենթակա 500 ձեռնարկություն է ասել, այլ 4500, որ, անշուշտ, պատկերն ամբողջովին փոխում է: Ակամա սխալի հանար ներողություն ենք խնդրում ընթերցողներից:

Զրույցներ

«ԴԺՎԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՀՈԳՈՎ ՈՒԺԵՂՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ»

Ամերիկյան հայտնի քարոզիչ Ռոբերտ Շուլլերի այս խոսքերը, որոնք նա ասել է կիրակնօրյա քարոզներց մեկի ժամանակ Կալիֆորնիայի բյուրեղյա տաճարում, միանգամայն համաղասախանում են մեր ոգեմության ոգուն: Բազմիցս, ոչ միայն հայտնի անհատների, այլեւ հաճախ նաեւ ամենահասարակ մարդկանց օրինակով ապացուցված է, որ ինչոիսի անհաջողություններ էլ հետաղնեն մարդուն, ինչոիսի անհավանական բարդ, խճճված իրադրության մեջ էլ նա ընկնի, ինչ հարվածներ էլ հասցնի նրան ճակատագիրը, եթե մարդն ունի հաղթելու կամք, դիմանալու, գոյատեւելու եւ հաջողության հասնելու ցանկություն, անկասկած, այդպես էլ կլինի:

Հայաստանում բրամոլներ եւ հարբեցողներ չկան: Ինչո՞ւ զուր տեղը ջուր դոյտրել: Սակայն, ցավոք, հանրապետությունում եւ հարբեցողներ եւ բրամոլներ կան: Թեեւ, ճիշտ է, հարկավոր է խոստովանել, որ Համաշխարհային առողջապահության կազմակերպության մասնագետները Հայաստանի վիճակը գնահատում են որպես բարեհաջող:

Ովքե՞ր են բրամոլները ու հարբեցողները: Ոմանք նրանց համարում են կորած մարդիկ, այլոք՝ հանցագործներ (դա հիմնականում վերաբերում է բրամոլներին), սակայն բժիշկները, մասնավորապես հանրապետության գլխավոր narկոլոգը, Հանրապետական narկոլոգիական դիսպանսերների գլխավոր բժիշկ Սեդա Ջամալյանը խորապես համոզված են՝ թե մեկը եւ թե մյուսը, այսինքն, եւ բրամոլները եւ հարբեցողները խորապես հիվանդ մարդիկ են: Նրանց ոչ թե դատել, այլ բուժել է հարկավոր:

Ս. Ջամալյանի խոսքերով՝ վերջին շրջանում Հայաստանում գտնվում է գինեմոլությամբ եւ բրամոլությամբ հիվանդների թվի անընդհատ աճ: Ու թեեւ բժիշկները չեն զբաղվում սոցիոլոգիական հետազոտություններով, գինեմոլության եւ բրամոլության տարածման դատճառների մեջ, Սեդա Ջամալյանի կարծիքով, կարելի է առանձնացնել նախ հանրապետությունում սոցիալ-տնտեսական դրության վատթարացումը, երկրորդ՝ մարդկանց բերահավատությունը հանրապետությունում տեսանելի առյուգայում կենսամակարդակի բարձրացման, հետեւաբար նաեւ վաղվա օրվա հանդեպ, երրորդ՝ յուրաքանչյուր օրվա հետ մեծացող զուտ կենցաղային դժվարությունները եւ այլն:

Այսօրվա դրությամբ, ըստ հանրապետության գլխավոր narկոլոգի տվյալների, հանրապետությունում գրանցված են 317 բրամոլ եւ 5158 գինեմոլ, իսկ բուն Երեւանում՝ 215 բրամոլ եւ 1427 գինեմոլ: Բացի դրանից, 1113 մարդ հանրապետությունում (դրանցից 900-ը՝ Երեւանում) վերցված են բժիշկների ընթացիկ դիտարկման՝ կազմված այն բանի հետ, որ այդ մարդիկ նշված են բրամիջոցների ոչ դարերաբար, այլ թեկուզեւ ժամանակ առ ժամանակ օգտագործման հատկանիշով:

Ս. Ջամալյանի կարծիքով, թեեւ դաշտանական վիճակագրությունը նշում է Հայաստանի բարվոք դրությունը, համաճարակագիտության, բրամոլության եւ իրավադատական մարմինների՝ բրադեղերի ու շշմեցնող այլ միջոցների ոչ բժշկական օգտագործման վերաբերյալ օպերատիվ, ինչպես նաեւ կողմնակի տվյալների վերլուծությունը ցույց են տալիս այն ծավալները, որոնք գերազանցում են մասնագետների ամենահամարձակ ենթադրությունները: Ենթադրաբար, Երեւանում չհաշվառված բրամոլների ու բունդոլների քանակն ավելի քան 20 անգամ շատ է: Աճում է նաեւ բրաբիզնեսի հանդեպ հետաքրքրությունը, որը չի կարող չանդրադառնալ հիվանդությունների տարածման վրա:

Բժշկական վիճակագրության համաձայն մինչեւ 18 տարեկան բրամոլների քանակը կազմում է 01 տոկոս, 19-30 տարեկաններին՝ 50 տոկոս, 31-40 տարեկաններին՝ 31 տոկոս, 40-50 տարեկաններին՝ 14 տոկոս, 50 եւ ավելի տարի ունեցողներինը՝ 5 տոկոս: Այսինքն բրադեղերի օգտագործման ամենամեծ բաժինն ընկնում է ամենաերիտասարդ ծաղկուն հասակին, երբ ճակատագիրը հնարավորություն է ընձեռնում օգտագործել բնության տված ունակությունները. լինի դա գիտական հայտնագործություն, թե գյուտարարություն, բիզնես, կապիտալի ստեղծում, աստիճանատանդակավոր վերելք կամ, վերջապես իր համար բարձր անուն եւ հանրահայտության նվաճում: Սակայն կանաչ օձի հանդեպ կիրքը կամ կործանարար խոտի զանազան «կանաչների» օգտագործումը փչացնում է մարդու ուղեղի ու դատիժների հին համակարգը. ինչ հարկադրաբար են բերել narկոդիսպանսեր, թե ինքդ ես եկել բուժման, անմիջապես համաղասասխան տեղեկություններ էին հաղորդվում միլիցիա՝ հաշվառման վերցնելու համար: Բնականաբար դա վախեցնում էր անգամ նրանց, ովքեր կցանկանային ձերբազատվել երիտասարդության կործանարար սովորությունից: Ահա թե ինչու շատ մարդիկ գնացին այլ հանրապետություններ բուժման, այնտեղ հսկայական գումարներ վճարեցին, միայն թե խրենց անունները հայտնի չդառնան:

Այժմ Հանրապետական narկոլոգիական դիսպանսերում կարելի է բուժվել անանուն ու «գաղտնի»: Բժիշկները երաշխավորում են հիվանդների անունները գաղտնի պահելն ու դեոնտոլոգիայի» սկզբունքները:

Հարկ է նաեւ ասել, որ Հայաստանի կառավարությունն այժմ բոլոր շահագրգիռ նախարարությունների հետ, բնականաբար, ներառյալ նաեւ բժիշկները, զբաղվում է բրամոլության ու բրաբիզնեսի դեմ պայքարի ազգային ծրագրի մշակմամբ:

Ավաղ, չգիտես ինչու, ժողովրդի մեջ կարծիք է արմատավորվել, որ գինեմոլությունն ու բրամոլությունն անբուժելի են: Այո, այդ հիվանդությունները դժվար են բուժվում, հատկապես երբ դրանք անտեսվել են, ինչպես նաեւ երբ մարդը ինքը ներքուս հակազդում է բժիշկներին: Սակայն երբ հիվանդը բուժման բուռն ցանկություն ունի, վստահում է բժիշկներին, եւ գլխավորը, հավատում իր ուժերին, արդյունքը լինում է դրական: Ս. Ջամալյանը բերեց մի շարք օրինակներ, երբ 5-6 տարվա սաաժով բրամոլները, ինչպես նաեւ համախառն ձեւով 15-20 տարի խմած գինեմոլները բուժումից հետո արդեն 10 տարի չեն տրկվում, իսկ նախկին գինեմոլներն ավելի քան 15 տարի չեն խմում:

Մարդու մեջ կան ներքին հսկայական հնարավորություններ: Դրանք ճիշտ հունի մեջ դնելով, ցանկանալով ու հավատալով, կարելի է հաղթել անգամ այնպիսի սարսափելի հիվանդությունների, ինչպիսիք են գինեմոլությունը եւ բրամոլությունը:

ՎԵՐԿ ՏՎԵՏԿՈՎԱ

Տրանսպորտ

7 նոր տրոլեյբուս եւ վիճակի բարելավման հույս

Երեւանի քաղաքապետարանը երեկ ֆնանակեց քաղաքի տրանսպորտի եռ կարգի վարչության 1993 թ. առաջին կիսամյակի աշխատանքը եւ տրանսպորտի աշխատանքի հետագա բարելավման հարցերը: Քննարկմանը մասնակցած կողմերը հանգում էին եզրակացության, որ քաղաքային տրանսպորտը լուրջ օժանդակության կարիք ունի: Քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Արամայիս Գալստյանի խոսքերի համաձայն, ներկայումս տրանսպորտի ոչ մի տեսակի համաղասասխան քանակություն չի ապահովվում: Ընդամենը 30-40 տոկոս վառելիք է ստացվում:

Ըստ ՀՀ տրանսպորտի եւ հաղորդակցության նախարարի առաջին տեղակալ Աշոտ Շահնազարյանի, որպեսզի Երեւանի բնակչությունը գոհ լինի տրանսպորտային սպասարկումից, անհրաժեշտ է այսօրվանից 2.5 անգամ ավելի շարժակազմ: Դա նաեւ դոտացիայի խնդիրը. 2 միլրդ 700 մլն ռուբլու փոխարեն կառավարությունում ընդունվել է 1 միլրդ ռուբլու չափը:

Գերխնդիր է հատկապես վառելիքի հարցը: Գնալով դրա քանակները նվազում են: Նախարարի առաջին տեղակալն անդրադարձավ նաեւ տրոլեյբուսների աշխատանքը խոչընդոտող ենթակայանների աշխատանքին: Իրենց դիտարկումները, հսկումները ցույց են տվել, որ երեկոյան ժամերին տարբեր տեղեր հոսանքը դարբերաբար անջատվում է անհայտ դատճառներով: Որոշ տեղերում նկատվում են լարերի դիտավորյալ վնասումներ, որոնք վնասում են կոնտակտային գծերը: Եթե փողոցում 20 լիտր դիզվառելիքը վաճառվում է 10-11 հազար ռուբլով, բնականաբար վարորդներին լայն հնարավորություն է ընձեռվում ընդամենը իր 85 լիտրից 20-ը վաճառելով օրվա դլանը կատարել, իսկ մնացածը... Դե հարցնենք, թե որ են կորչում ավտոբուսները. կգտնե՞նք:

«Փափախչիների» հարցը, որոնցով լեցուն են այսօր կանգառները: Երեւանի ՆԳՎ դեպի տեղակալը ի լուր՝ բոլորի հայտարարեց, թե «երբ որեւէ մեկը կարծում է, թե միլիցիան ի վիճակի չէ գործ անել, չարաչար սխալվում է: Տվեք ինձ կոնկրետ մեքենայի համար, ես միանգամից հարցը լուծեմ»: Նա հավատեց, թե ինքը ի վիճակի է «գրոնչիներին» գրել, սակայն դրանից կտուժի բնակչությունը. քանի որ քաղաքային տրանսպորտն ի վիճակի չէ բավարարել բնակչությանը:

Իբրեւ լավատեսական ավարտ նշենք, որ մայրաքաղաքի տրանսպորտի շարժակազմը կհարստանա 7 տրոլեյբուսով, որոնցից առաջինը երեկ գիշեր Աստվորդոլից ինքնաթիռով ժամանեց Երեւան: Գ. Ն.

Հարգելի հայրենակիցներ

Ս/թ սեպտեմբերի 21-ին Մատենադարանի մոտ, Թատերական հրապարակում եւ երիտասարդության դպրոցում ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ երիտասարդության հարցերի վարչությունը, Ազգային երիտասարդական կենտրոնը, բուհերի ուսանողական խորհուրդները նշելու են անկախության օրը:

Մատենադարանի մոտ, առավոտյան ժ. 11:00-ին Դուք հնարավորություն կունեք տեսնել Արտակ արքային եւ Դավիթ-Բեկին իրենց ժխտքերով: Թատերական նացված այս միջոցառման ընթացքում կիանդիսանեք երաժշտության նշանավոր գործիքների եւ խմբերի:

Այնուհետեւ ժ. 13:00-ից մինչեւ 16:00-ը Թատերական հրապարակում կանցկացվի ժողովրդական տոն՝ կինոյի, էստրադայի, հումորի նշանավոր կատարողների եւ առանձին հանդիսատեսների մասնակցությամբ: Անկախության օրվան նվիրված տոնահանդեսը ժ. 16:00-ին կտեղափոխվի երիտասարդության դպրոցի մեծ դահլիճ, ուր կսկսվի ուսանողական շոու ծրագիրը՝ հանրապետության բուհերի հավաքական թիմերի մասնակցությամբ:

Անկախության օրվան նվիրված տոնահանդեսի հովանավորն է «ԻՄՍԿ» հայի տալական համատեղ ձեռնարկությունը:

NAAVI
AVIACORPORATION
«ՆԱԱՎԻ» ավիաընկերությունը առաջարկում է
ԵՐԵՎԱՆ-ԽԱԲԱՐՈՎՍԿ
ավիաուղի: Մոսկվա չվերթը կկայանա սեպտեմբերի 23-ին:
Տոմսերը վաճառվում են ընկերության գրասենյակում:
Հասցեն՝ «Սեւան» հյուրանոց, 120 սենյակ.
Հեռախոսներ՝ 56-49-78, 58-26-53

Կարդա

Բարոյական աջակցությունն անհրաժեշտ է բոլորին

Հանրապետության հիվանդանոցներում այսօր բուժվում են Ղարաբաղում ու հանրապետության սահմանամերձ շրջաններում մարտական գործողություններում վիրավորված շատ ազատամարտիկներ: Սակայն նրանց բուժօգնությունից բացի անհրաժեշտ է նաեւ բարոյական աջակցություն, որն ավելի հստակ դարձնում է նրանց հավատը իրենց գործի նկատմամբ, հավատում, որ նրանց չեն մոռանում: «Ներկայումս հանրապետական այրի կլինիկական հիվանդանոցում բուժման մեջ են գտնվում քաջակորով դատանիներ, ԼՂՀ Մարտունու շրջանի Հեր-Հեր գյուղի բնակիչներ», խմբագրությանը հասցեագրած նամակում գրում է դատերազմի եւ աշխատանքի վետերան, դատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ Զ. Մարկոսյանը: Տեղեկանալով նրանց մասին, Մատոցքի շրջանի դատերազմի, աշխատանքի եւ զինված ուժերի վետերանների խորհրդի մի խումբ անդամներ այցի են գնում 409, 410, 411 հիվանդասենյակներում բուժվող դարաբցոցի ազատամարտիկներին: «Խորհրդի սուղ միջոցներից,- գրում է նամակի հեղինակը,- մարտիկներին հանձնվեցին հազարական ռուբլի եւ շնորհակալական նամակներ»:

Նման ձեռնարկները չնայած իրենց նյութական ոչ այնքան մեծությանը, բարոյական անգնահատելի օգնություն են, հոգեբանական մեծ աջակցություն: Այդպիսիք անհրաժեշտ են այսօր շատերին: «Ազգ»

Ղարաբաղի ռուսները դիմում են Ալեխի Երկրորդին

